«Իրավաբան.նեթ» լրատվական կայքի
լրագրող պարոն Գևորգ Թոսունյանին

Հարգելի պարոն Թոսունյան

Ի պատասխան Ձեր 2015թ. ապրիլի 27-ի №01/12 հարցմանը հայտնվում է, որ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 2008թ. հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում ծխելը սահմանափակելու մասին» թիվ 317-Լ հրամանով ՀՀ կառավարության աշխատակազմի վարչական մասնաշենքի տարածքում (այդ թվում ՀՀ կառավարության նիստերի դահլիճում) ծխելն արգելվում է, բացառությամբ դրա համար նախատեսված վարչական մասնաշենքի ներքին բակի տարածքում հատկացված հատուկ վայրերի:

Գործերի կառավարիչ՝ Դ. Բեգլարյան

17 հուլիսի 8 317 - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԾԽԵԼԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու մասին» N 726-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի «ժթ» ենթակետը՝

հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի վարչական մասնաշենքի (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գործերի կառավարչության տրանսպորտային բաժինը) տարածքում ծխելն արգելվում է, բացառությամբ դրա համար նախատեսված վայրերի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում սահմանված արգելքը չի տարածվում Հայաստանի Հանրապետության վարչապետի և փոխվարչապետի մոտ հրավիրված պաշտոնական պատվիրակության ղեկավարների, անդամների և հյուրերի վրա:

3. Թույլատրվում է ծխել՝

1) միայն Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի վարչական մասնաշենքի ներքին բակում՝ դրա համար հատուկ հատկացված վայրերում.

2) միայն անհատական (երբ աշխատանքային սենյակում գտնվում է մեկ անձ) փակ աշխատանքային սենյակում.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գործերի կառավարչության տրանսպորտային բաժնի զբաղեցրած տարածքում կարգավարների սենյակի դիմացը գտնվող տաղավարում:

4. Սույն հրամանի 3-րդ կետի 2-րդ ենթակետը կարելի է կիրառել միայն հաշվի առնելով չծխողների նախապատվությունը, որպեսզի ծխողները չխանգարեն չծխողներին:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գործերի կառավարչին՝

1) մեկշաբաթյա ժամկետում սույն հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված տարածքն ապահովել մոխրամաններով և փակցնել ծխելու գոտի համարվելու մասին հայտարարություն (ցուցանակ).

2) սույն հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված տարածքում ապահովել մշտական մաքրություն:

6. Սահմանել, որ սույն հրամանի պահանջների խախտումը դիտվում է որպես աշխատանքային կարգապահության խախտում և առաջացնում է օրենսդրությամբ նախատեսված կարգապահական պատասխանատվություն:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ է. Գևորգյանին՝ ապահովել սույն հրամանի իրազեկումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի աշխատողներին:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 21-ից:

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ